դարանում, վոր գրել, կազմել և վոսկով զարդարել և ի վայելս յուր հորեղբորը Ավագտեր վարդապետին և Դավիթ երեց (նախընթաց գրիչը), տեր Զաքարա և Մարգարա և Հակոբ յեղբայրների. վերջինս Սպիտակավոր Աստվածածնի կամ Բոլորաձորի անապատի տնտեսն եր. այստեղ եկ գրված և ձեռագիրը՝ ՉԼԳ==1484 թվին։ Հ. Տաշյանը մանրանկարչական խորանների, լուսանցքի զարդերի և մանրանկարչական տառերի համար նշանակում է. «բազմագույն, ոսկով և գեղեցիկ»*։

Յեՙրը մեռավ Ավագտեր վարդապետը, չգիտենք. 1498 թվին Սպիտակավոր Աստվածածնի առաջնորդն արդեն նորա յեղբորորդին Զաքարիան եր, վորի ժամանակ Վանական վոմն կրոնավոր գրել է մի Մաշտոց, պատմական կարևոր հիշատակարանով, սկսելով Փոնձաթաղ գյուղում, վոր նույնացնում են ներկա Բեշիշքյանդի հետ, և տեղից տեղ փախչելով, վերջացնում Զորս վանքում. «Եւ եղև զրաւ գծագրութիւն սորա ի թվիս հայոց ՉԽԷ, (առ) ոտս ածարան վղպացս Վարդան վրդպի և Աբրահամ հռետորի. և առաջնորդ սր ուխտիս տր Զաքարիա բարէմիտ կրունաւորի (s!) և այլ կրաւնաւորացս»։ Վարդան վարդապետը Ավագտերի ուսումնակիցն եր։ Որինակի շնորհողներն են ուխտի առաջնորդը տեր Զաքարիան և յուր Հակոբ յեղբայրը միայնակյաց։ Ժամանակի Պոռչյան իշխանն եր պարոն Արղութա, «թոռն մեծ Զումայլին»**։ Սպիտակավոր Աստվածածնի արևմտյան դրան ձախ կողմը մի կարճ արձանագրության մեջ 1494 թվին հիշվում է և պարոն Շահպանի, վոր դարձյալ նույն տոհմից պիտի լինի. «ՉԽԳ. զպը Շահպանին յշ»։

Աբրահամ ծաղկոցի մեջ հայտնի վերջին գործն է փոքրագիր, 12×83 սմ. մագաղաթի, բոլորգիր և նկարագարդ մի ավետարան. տների սկզբնագրերը, ինչպես և նշանակալից բառերը՝ «տր», «ած», «հայր», «յս» և հատվածների առաջին տողերը վոսկեգիր, մանրանկարչական տառերով, խորաններով, տնորինական բազմաթիվ պատկերներով և լուսանցքի զարդերով։ Յեթե համեմատելու լինինք 1475 թ. (№ 2374) կամ 1484 թ. ավետարանների նկարչության հետ, այստեղ անհամեմատ ավելի բարձր արվեստ կա, մինչ այն աստիճան, վոր կասկածել կարելի չե, թե Աբրահամի գործն է սա։

Տնորինականների տակ Աբրահամը բացատրական մակագրություն ունի, տողերի սկզբնագրերը յուր անվան սկզբնատառերով. որինակ՝ Խաչելության տակ գրված է.

Անեղ որդին հաւր ծոցածին
Բեռեռելով կայր ի խաչին
Բամից հրէից քշլից
Անանայի և Կայիափային.
Յանձնէն զհանդերձն մերկացին,
Հանեալ ի խաչ բեռեռէին,
Ասաց փրկիչն զելի ելին
Եւ մեռաւ կամօ (s!) նա ի խաչին.
Իսկ բնութիս ադամային
Կենդանացաւ մահուամբ նորին։

Նա հառաջադիմել է նաև յուր վարդապետական հմտության մեջ, այժմ նա կոչված է «քաջ բարեբնապետն Աբրահամ» ավետարանի Գրիգոր գրչի կողմից, վոր «վերին Նորավանքի» արեղա յե. Նախընթաց Վանականի կողմից եկ կոչված «Աբրահամ հռետոր»։ Նա ստացել է այս ավետարանը ՉԽԴ=1495 թվին, բայց նկարչությունը շարունակվել է ՉԽԵ=1496, ՉԽԷ=1498, գուցե և հետո. Մարկոսի վերջում գրված է. «թվ. ՉԽԵ. Ստեփեի վանքս ծաղկեցաւ». մյուսանգամ գալստյան պատկերի տակ, նկարչի և յուր Զաքարիա յեղբոր վոչ անհատական բնույթ կրող պատկերներով, նշանակված է. «թվ. ՉԽԷ», իսկ դիմացի յերեսի ներքևի լուսանցքում հաղիվ նկատելի կարմրագեղով գրված է. «Զրաբեմիտ կինն և զերկիւղածն այ | Զաղիզն, որ շատ կու ծառայէ մեզ և | հտ ընծա սր աւետարանիս. յիշ. ի քս | թ. ՉԾԱ»=1502։ Մատթեոսի նկարի տակ մակագրել է. «Զանարժան Աբրահամ, ստացիչ և նկարիչ սր աւետարանիս, հանդերձ ծնողօք և վղաւք յիշեսջիք ի սր և ածամերձ յաղօթս ձեր և ած զձեզ յիշէ, ամէն»։ Նա արդյոք Տաթևի և վերին Նորավանքի կողմերից կրկին յուր Անապատը դարձավ, թե՞ վոչ, չգիտենք։

Գրիգոր գրչի ձեռքով գրված հիշատակարանի համեմատ ստացել է Աբրահամ այս ավետարանը «ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ի ժառանգութիւն ընդանեաց իւրոց կենդանեաց և ի փրկութիւն հոգոց ննջեցելոց իւրոց, հօրն իւրոյ... (ջնջված է, բայց գետենք, վոր անունը Տերտեր եր) և հաւրեղբաւրն ածարան վղան Աւագտիրի և մաւրն իւր Գոնցին։ Եւ աւագ եղբաւրն Դաւիթ քհնին և միւս եղբաւր բարէմիտ և կուսակրաւն արեղային Զաքարիայի և կրտսեր եղբաւրն իւր միայնակեաց և սպասաւոր միաբանիցն Յկրին և այլ միւս եղբաւրն աշխարհի Մարգարին և եղբաւր որդոյն իւր գեռարոյս և կուսակրաւն արեղայի Վրդանիսի»*։

Վերև մի քանի անգամ հիշատակվեցան (եջ 232, 234, 235, 236) Գեղարդում նստող Հովհաննես յեպիսկոպոսը «թոռն մեծին Պռոշայ» և յուր յեղբայրը Ստեփանոս, նաև «պարոն» Հայկազ, Ամիր Վասակ, Հաղբակ և Ամիր Հասան, վորոնք Զումայլի յեղբորորդիներն էին։ Այս Հովհաննես յեպիսկոպոսն էլ վոչ միայն ստացող եր, այլ և լավ գրիչ. 1486 թվին նա գրել է Գեղարդա վանքում մի Հայսմավուրք Կոտայքի Բարձապի** գյուղի

* Տաշյան. Ցուցակ. 855։
** Ձեռ. էջմ. № 960 (Հավել. Բ. 11)։

* Ձեռ. էջմ. № 577. Ն. Ց. (Հավել. Բ. 34)։
** Բարձապի գյուղը այժմ կոչվում է Ցելղովան, Ղըրխբուլաղի շրջանում. հնությյան մնացորդներ չկան, բայց մի անթվական խաչքարից, գյուղի մոտ յեղած բլրի վրա։ Հին մատուռը քանդել են և նորը շինել։ Գեղեմանատանը մի տափակ քարի վրա «ՌՃԾԴ»=1[illegible]04 թիվը։ Ղըրխբուլաղ գյուղի հին անուն Աղասոր է. Conybeare. Catalogue of the Armen. Manuscripts. 63.